

APAGA
Quarterly

فصلنامه فرهنگی – اجتماعی مطالعات شرق شناسی ، ایرانشناسی و ارمنی شناسی
An International Journal of Oriental Studies

آپاگا
فصلنامه



خانواده سوروگین

شماره ۷۳ بهار (خرداد) ۱۳۹۷

No. 73, June 2018

Հ Ա Յ . Յ
Հանդես

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies

APAGA
Quarterly



Armenia according to Ananai Shirakatsi

ISSN 1682-5438

Համար 73, Հունիս , 2018 թ.

No. 73, June 2018

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian,

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com ISSN 1682-5438

شماره ۷۳ بهار ۱۳۹۷

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغدادساریان

صندوق پستی شماره ۹۴۸۸-۱۵۸۷۵

تهران – ایران

نشانی اینترنت www.ApagaOnline.com و www.apagamonthly.4t.com

apaga98@hotmail.com

پست الکترونیکی

ISSN 1682-5438

Բովանդակություն

Հայերեն - Գ. Չիչերինին ուղղված Ա. Ահարոնյանի «Բաց նամակը»

Անգլերեն Ակնարկ Հայաստանի պատմական աշխարհագրության

Պարսկերեն Հին իրանական կանանց նկարները

CONTENTS

Armenian -About Letter of A. Aharonian to G. Chicherin

English Overview of Armenian geography.

Persian Iranian Women photos of old times

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: \$ 20 per year

Գինը 5000 ռիալ

فهرست

فارسی عکس های نایاب و تاریخی زنان و دختران ایران در

۱۲۰ سال پیش

ارمنی در باره نامه آ. آهارونیان به گ. چیچیرین

انگلیسی نگاهی به جغرافیای تاریخی ارمنستان

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوماً بیانگر موضع "آپاگا" نیست.

نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.

مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.

استفاده از مطالب "آپاگا" با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۱۰۰۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصر پلاک ۱۱۴۸

**ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ Գ.
ԶԻՉԵՐԻՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆԻ «ԲԱՑ
ՆԱՄԱԿԸ» ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Վլադիմիր Պետրոսյան
պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, Երևան**

Հայաստանում դաշնակցության լրատվության միջոցները, առանց որևէ մեկնաբանության, հաճախ են հրապարակում Ավետիս Ահարոնյանի «Բաց նամակը» ուղղված Սովետական Միության արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Զիչերինին:

Ինչպես դաշնակցական մամուլը, այնպես էլ դաշնակցության գաղափարախոսության կրողներն ու համակիրները հրապարակելով Ահարոնյանի «Բաց նամակը», հետապնդում են մեկ նպատակ՝ հայ ժողովրդին հասած դժբախտությունների համար մեղադրել Սովետական Ռուսաստանին, չբերելով որևէ հիմնավոր փաստ ու ապացույց:

Վերոհիշյալ իրողությունը նկատի ունենալով հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Ահարոնյանի «Բաց նամակում» Ռուսաստանին վերագրվող «դավերը» և դրանց կապակցությամբ ներկայացնել իրական փաստերը:

ԱՌԱՋԻՆ «ԴԱՎԸ»

Ա. Ահարոնյանը նկատի ունենալով Գ. Զիչերինի այցելությունը Հայաստան, 1925 թ. մայիսի 26-ին նրան ուղղել է մի բաց նամակ, Սովետական Ռուսաստանին ներկայացնելով մի շարք մեղադրանքներ:

Հարկ չեմ համարում այստեղ հանգամանորեն անդրադառնալ Ահարոնյանի նամակի այն հատվածներին, որտեղ նա իր անձն է առաջ մղում, ընդգծելով հայ ժողովրդի առջև ունեցած «ծառայությունները»:

Ահարոնյանի նամակը թելադրված է պոպուլիստական մղումներով և նպատակ ունի արդարացնել դաշնակցությանը և հայ ժողովրդին պատճառած բոլոր դժբախտությունները

համարել Սովետական Ռուսաստանի հակահայ քաղաքականություն, Ռուսաստանի «դավերի» արդյունք:

Որքանով է ճիշտ Ահարոնյանը Ռուսաստանին վերագրելով այդ «դավերը»:

Այս հարցին պատասխանելու նպատակով փորձեմ, որքան հնարավոր է համառոտ անդրադառնալ Ահարոնյանի «բաց նամակում» նշված «դավերին», նկատի ունենալով, որ Հայաստանի որոշ լրատվամիջոցներ ժամանակ առ ժամանակ տպագրում են Ահարոնյանի «բաց նամակը», առանց մեկնաբանությունների, այն ներկայացնելով որպես ճշմարտություն:

Հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի գործած առաջին «դավը» Ահարոնյանը համարում է այն, որ «1914-ին Ռուսիան իր դաշնակիցների հետ պատերազմի բռնվելով Թուրքիոյ դէմ, պատերազմի մէջ քաշեց ու հայ ժողովրդին, խոստանալով հայ հայրենիքի ազատագրութիւնը: Անշուշտ, առանց մեծ վախի չէր, որ հայ ժողովուրդը այդ արիւնոտ պայքարի մէջ նետուեց ոռու ազգի և դաշնակիցների կողքին»:

Այնուհետև, հիշելով, որ հայ ժողովրդի մեկ ու կես միլիոն զավակներ զոհ գնացին և Թուրքաց Հայաստանը մոխիրի վերածվեց, Ահարոնյանը գրում էր. «Եւ երբ այս գնով ոռու և հայ բանակները Երզնկայից ու Տրապիզոնից ջարդելով թուրքերին, կարողացան վերջապէս գրաւել մարտիրոսուած հայ գավառները, երբ փախստական հայութիւնը շտապում էր վերադառնալ իր հայրենիքը, ճիշտ այդ ժամանակ, շնորհիւ ձեր բոլշեւիկեան պրոպագանդայի, ոռու զօրքը լքեց Կովկասեան ճակատը, թողնելով հայկական փոքրիկ ուժասպառ զօրքը մեն-մենակ թիրքերի առաջ»:

Սա համարելով Սովետական Ռուսաստանի առաջին դավը, Ահարոնյանն ավելացրել է. «Եւ այս դաւին եկաւ աւելանալու Լենինի համբավավոր դեկրետի խեղկատակութիւնը, որով ոռու զօրքը յետ քաշելով հանդերձ, Թիւրքական Հայաստանը հռչակում էր «ազատ ու անկախ»:

Եւ ահա, այսպէս,-շարունակել է Ահարոնյանը,- 1917-ին այն վիթխարի պատերազմը, որ սկսել էր Ռուսաստանը Կովկասում իր բոլոր ծանրութեամբ շնորհիւ սովետական վարիչների, ընկնում էր հայ ժողովրդի ուսերին, եւ ոռու-թուրքական պատերազմը դառնում էր հայ-թուրքական պատերազմ»:

Անդրադառնալով Ահարոնյանի նշած առաջին «դավին», հարկ եմ համարում այստեղ նախ մի մեջբերում կատարել դաշնակցության երևելի անդամ Ս.Վրացյանի խմբագրած «Հորիզոն» թերթի հրապարակած հաղորդագրությունից, որտեղ պատմվում է ռուսական ցար Նիկոլայ Երկրորդին 1914 թ. նոյեմբերի 26-ին Թիֆլիսում դիմավորելու մասին:

«Առանձնապես գալով հայերիս,-գրում էր «Հորիզոնը», - կասենք, որ ներկայ բարձրագույն այցը Թիֆլիս եւ ռուս-թուրքական պատերազմի վայրերը աւելի քան պատմական է մեզ համար, որովհետեւ այս ծանր օրերին, երբ հայ ժողովուրդը իր նւիրական ու պատմական իղձերի իրագործումը կապում է Ռուսաստանի հետ, հզոր Ռուսաստանի կայսեր այցը հայաշատ վայրերը միմիայն բերկրանքով ու ցնցութեամբ կարող է լեցնել հայ ժողովրդի սիրտը» («Հորիզոն», նոյեմբերի 27, 1914 թ.):

Նոյեմբերի 27-ին կազմակերպված հանդիսության ժամանակ Ա. Խատիսյանը, որպես Թիֆլիսի քաղաքագլուխ, ցար Նիկոլայ Երկրորդին դիմելով, իր ողջույնի ճառում ասել է հետևյալը.

«Հաստատ հավատով դեպի Ռուսաստանի անպարտութիւնը, նրա անսպառ ուժերը, դեպի մեր մեծ կայսրը տածած բուռն սիրով, մենք՝ միացած մտածմունքով և շաղկապված թափվող արիւնով՝ տալիս ենք հանդիսավոր երդում՝ չսպառելու մեր հոգու ուժը մինչև որ մեր պանծալի հաղթական զորքն ընդմիշտ չջախջախի նենգ թշնամուն եւ դրանով առավել եւս մեծացնի մեր մեծ հայրենիքի ուժը և զորութիւնը: Խոնարհվում ենք սիրեցյալ թագավորի առաջ...» («Մշակ», նոյեմբերի 28, 1914 թ.):

Հայ բնակչության պատգամավորության անունից ցարին ողջունել է Սամսոն Հարությունյանը և հավաստիացրել, որ «մեզ համար այս պատմական օրում ամբողջ հայ ժողովուրդը ամբողջ հոգով մասնակից է մեր ուրախության»:

«Եւ այժմ,-շարունակել է Ս. Հարությունյանը,-երբ փառապանծ ռուսական զորքը իր վեհապետ պարագլխի կամքով կովում է Հայաստանի ձյունապատ բարձրությունների վրա և Այաշկերտի լայն հովտում Թուրքիայի դեմ, որ հանդգնեց Գերմանիայի դրդամբ, ձեռք բարձրացնել հզոր Ռուսաստանի վրա, հայերը, հետևելով իրենց նախնյաց պատգամներին, ոտքի ելան իբրեւ մի մարդ պատրաստակամ, ինչպես և ձեր մյուս

հավատարիմ հպատակները, զոհել իրենց կյանքը և գույքը ի փառս մեծին Ռուսաստանի եւ գահի»(նույն տեղը):

Վերջապես մի վկայություն էլ բերենք «Արարատ» ամսագրից:

Ամենայն հայոց կաթողիկոսի օրգանը 1915 թ. թիվ 4-5-ում նկարագրել է այն համաժողովրդական ցնցությունը, որով էջմիածնում դիմավորել են ապրիլի 15-ին ռազմաճակատ մեկնող հայկական կամավորական գնդերին:

Այսպիսին էր Առաջին աշխարհամարտի սկզբին Ռուսաստանի նկատմամբ դաշնակցության քաղաքականությունը:

Իսկ ինչպիսի՞ն էր այդ նույն ժամանակ դաշնակցության քաղաքականությունը հայոց ցեղասպանությունն իրագործած երիտթուրքերի ղեկավարած Թուրքիայի նկատմամբ:

Պատասխանեմ նաև այդ հարցին:

1914 թ. հուլիսին Կարինում գումարված 8-րդ համագումարում «դաշնակցությունն իբրև հայության ամենից կազմակերպված ուժ» պետք է քններ կացությունը և ճշտեր, թե այդ դժվարին պայմաններում ո՞րն էր լինելու հայ ժողովրդին պատերազմից անվնաս դուրս բերելու ամենից ապահով ճանապարհը»:

Ի՞նչ տվեց Ս. Վրացյանի գնահատմամբ «հայ կյանքին գույն և բովանդակություն տվող կուսակցության ընդհանուր ժողովը»(Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետություն, Երևան, 1998, էջ 7):

Կարին եկած երիտթուրքերի ներկայացուցիչները մեծ խոստումներ տվեցին, թե «կկազմենք ինքնավար Հայաստան», եթե Դաշնակցությունը միանա Կովկասից Ռուսաստանին դուրս շարտելու գործին:

Ճիշտ է, համագումարը մերժել է երիտթուրքերի պահանջը, բայց ընդունել է մի այնպիսի որոշում, որով մի կողմից նշվում էր «Բարենորոգումները տապալելու կառավարության վարած քաղաքականությունը», մյուս կողմից՝ ընդգծվում էր.

«Ընդհանուր ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ կուսակցութիւնը հանդես կգա իթիհատի նկատմամբ անկիրք դատավորի և անհաշտ ընդդիմութեան դերում, կը պայքարի նրա վնասակար ազգայնամօլական և

հակապետական քաղաքականութեան դէմ: Ժողովը չի բացառում համագործակցութիւնը համապետական խնդիրներում»(ընդգծումն իմն է-Վ.Պ.):

Թե ի՞նչ էր նշանակում «համապետական խնդիրներում համագործակցութիւնը», դաշնակցութեան ժողովը հարկ չի համարել դա պարզաբանել:

Թուրքիան մտել էր Առաջին աշխարհամարտի մեջ, պատերազմ սկսելով Ռուսաստանի դեմ: Դա, իհարկե, առաջնահերթ համապետական խնդիր էր:

Եվ այս «համապետական խնդրում» դաշնակցութիւնը համագործակցել է հայոց ցեղասպանութեան ոճրագործ երիտթուրքական կառավարութեան հետ:

Ահա, թե ինչ է վկայել Ս. Վրացյանը: Կարինի համագումարը, ցրվելուց առաջ, «քննութեան առնելով Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հավանականութիւնը և այդ առթիվ որոշեց հրահանգել իր մարմիններին և ընկերներին մնալ օրինապահ իրենց ապրած երկրի վերաբերմամբ և կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականութիւնները»(Ս. Վրացյան, նույն տեղը, էջ 8):

Ի պատասխան երիտթուրքերի ներկայացուցիչների պնդմանը, դաշնակցութեան ներկայացուցիչները հայտարարեցին. «եթե, այնուամենայնիվ, իրենց կամքի հակառակ, պատերազմը պայթի, դաշնակցութեան Թուրքիո հատվածի բոլոր անդամները լրիվ կերպով կկատարեն իրենց պարտքը հանդեպ պետութեան:

Ինչ վերաբերում է կովկասահայերին՝ Դաշնակցութիւնը չի կարող հանձնառութիւն ստանձնել նրանց ապստամբեցնելու, մանավանդ, որ Թուրքերը իրենց վերջին հինգ տարվա քաղաքականութեամբ Թուրքահայերի վերաբերմամբ այնպիսի վիճակ չստեղծեցին, որ կարողանային գրավել ռուսահայերի համակրանքը»(նույն տեղը):

Ճիշտ է, 8-րդ համագումարից հետո Դաշնակցութիւնը խզել է իր կապերը Իթիհատի հետ, բայց դա այլևս նշանակութիւն չունեցավ, որովհետև երիտթուրքերի հետ երկարատև սիրախաղի հետևանքները վերացնելու ոչ ժամանակ էր մնացել և ոչ էլ հնարավորութիւն:

Ահարոնյանը «մոռացել է» այս ամենը և ամեն ինչում մեղադրում է Ռուսաստանին:

Ահարոնյանը «մոռացել է», որ հետագայում էլ Դաշնակցությունը չկարողացավ զուրս պրծնել թուրքական կախարհանքից: Այդպես էր 1918թ. հունիսի 4-ին, երբ Բաթումում կնքվեց «բարեկամության» պայմանագիր ու ոչնչի հավասարեցվեց հայ ժողովրդի տարած հաղթանակը Սարդարապատի, Ապարանի ու Ղարաբիլիսայի ճակատամարտերում:

Այդպես էր 1918թ. ամռանը, երբ Հայաստանի Հանրապետության դաշնակցական ղեկավարները հունիսի վերջին մեկնեցին Կ.Պոլիս, ծնկի եկան հայոց ցեղասպանությունը կազմակերպած դահիճների առջև ու նրանց պահանջով Հայաստանից հեռացրին Անդրանիկ Օզանյանին:

Այստեղ հարկ եմ համարում րնթերցողին ներկայացնել այդ խալտառակությունն ապացուցող հետևյալ փաստերը.

Առաջին. 1918 թ. հունիսի 28. Կ. Պոլսից Ահարոնյանի ուղարկած հեռագիրը Հ. Քաջազնունուն. «Կովկասյան ռազմաճակատի օսմանյան հրամանատարությունը կառավարութայանը հաղորդում է, որ երկաթուղով օսմանյան զորքերի ուղարկելուն խոչընդոտում են հայկական զորքերը կամ ջոկատները:

Մեզ հայտնելով այդ մասին, օսմանյան կառավարութայան ներկայացուցիչներն առաջարկում են անօգուտ քնդհարումներից ու կոնֆլիկտներից խուսափելու համար միջոցներ ձեռնարկել:

Խնդրվում է անհապաղ ստուգել, թե որ շրջանում են տեղի ունեցել այդպիսի փաստերը և շտապ անհրաժեշտ ցուցումներ տալ դադարեցնելու օսմանյան զորքերի նկատմամբ ամեն տեսակի թշնամական գործողությունները: Ահարոնյան»: /ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 17ա):

Երկրորդ. 1918 թ. հունիսի 29. Կ. Պոլսից Ահարոնյանի ուղարկած հեռագիրը Քաջազնունուն. «Հեռագրեր, իսկապես, հայկական զորքերը կամ բանդաները դիմադրություն են ցույց տալիս թուրքական զորքերի տրանսպորտին:

Անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռնարկել քնդհարումներից և թյուրիմացություններից խուսափելու համար տվյալ պահին, որտեղ մեր հարաբերությունները սկսվում են լավանալ, առավելապես, որ մենք Բաթումի պայմանագրով իրավունք չունենք դիմադրել թուրքական

գորքերի տրանսպորտին, ինչը մեր բարձրագույն հրամանատարությունը պետք է լավ հայտնի լինի: Ահարոնյան»(նույն տեղը, թ. 8):

Երրորդ. 1918 թ. օգոստոսի 1. Կ. Պոլսից Ահարոնյանի և Խատիսյանի հեռագիրը Հայաստանի կառավարությանը. «Կայսերական կառավարությունը բողոքում է, որ Անդրանիկն ու նրա մարդիկ անհանգստացնում են օսմանյան գործերին:

Խնդրվում է ստուգել և ձեռնարկել վճռական միջոցներ, որպեսզի վերջ տրվեն այդ անցանկալի փաստերին, եթե դրանք, իսկապես, տեղի են ունեցել: Ահարոնյան, Խատիսյան»(նույն տեղը, թ. 107 ա):

Ահարոնյանը «մոռացել է», որ իրենց այս հեռագրի հիման վրա գեներալ Նազարբեկյանը ստորագրել է հրաման Անդրանիկի կամավորական գունդը ցրելու մասին:

Եվ երիտթուրքական հանցավոր իշխանություն, ինչպես նաև անգլիական օկուպացիոն գորքերի հրամանատարության պահանջով Հայաստանի դաշնակցական կառավարությունը ժողովրդական հերոս Անդրանիկին հեռացրել է Հայաստանից:

Դաշնակցությունը չի բավարարվել Անդրանիկին Հայաստանից հեռացնելով: Այդ կուսակցությունը շարունակաբար զբաղված էր Անդրանիկին վարկաբեկելով:

Այստեղ հարկ եմ համարում րնթերցողի ուշադրությունը ներկայացնել Գ. Նժդեհի հետևյալ վկայությունը. Նժդեհը գրել է. «Դաշնակցությունը... զբաղված էր Անդրանիկին սևացնելու անշնորհակալ գործով: Անդրանիկին վարկաբեկելու համար, դաշնակցության պատվերով հրատարակվեց նրա դեմ ուղղված մոտ 1000 էջանոց երկհատոր աշխատություն: Ամբողջովին Անդրանիկին նվիրված Սեպուհի հուշերը հանդիսանում են ազգային հերոսին իր փառքի բարձունքից տապալելու դատապարտելի փորձ: Հենց որ Անդրանիկը հեռացավ դաշնակցությունից, միանգամից դարձվեց «հարբեցող», «անկիրթ», «վախկոտ», «այս կամ այն ճակատում իր մասնակցության համար նախօրոք սակարկող», «աննշան գործողությունների ճանապարհով մեծ դափնիներ քաղող» և այլն: Բոլոր ջանքերը ներդրվեցին Անդրանիկին «զարդարելու» քաջնազարյան (դոնքիշոտյան) որակումներով, չգիտակցելով, որ դրանում իրականում ծիծաղում են հայ ազատագրական շարժման վրա,

քանզի ժողովուրդն Անդրանիկին համարում է հայ ազատագրական պայքարի խորհրդանիշ»։ ()

Սովետական Ռուսաստանի ժողկոմխորհրդի «Թուրքահայաստանի մասին» դեկրետը Հայկական հարցի պատմության մեջ առաջին փաստաթուղթն է, որ խոշոր տերություններից մեկը՝ Ռուսաստանը ոչ միայն ճանաչել է Արևմտյան Հայաստանի անկախությունը, այլև նախատեսել էր դա իրականացնելու միջոցները, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում էր Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերին պահելը:

Այդ դեկրետի իրագործումը դրվել էր Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանի վրա:

Ահարոնյանը «մոռացել է», որ Շահումյանի հետ համագործակցելու փոխարեն դաշնակցությունը միացել է ադրբեջանցի մուսավաթականներին և վրացի մենշևիկներին ու համատեղ ուժերով վիժեցրել են դեկրետի իրականացումը:

Ավելին, Ահարոնյանը Սովետական Ռուսաստանի կառավարության դեկրետը համարել «խեղդատակություն» և Սովետական Ռուսաստանի կառավարությունը մեղադրել է Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերը հեռացնելու համար:

Ահարոնյանը պարզապես «մոռացել» է, որ արհամարանքով մի կողմ էր նետել նաև Հայոց ազգային խորհրդին հասցեագրված Սովետական Ռուսաստանի զինված ուժերի ժամանակավոր գլխավոր հրամանատար Ա. Մյասնիկյանի 1918 թ. հունվարի սկզբին ուղարկած երեք հեռագրերը, որոնցով նա խնդիր էր դնում կասեցնել զորքերի հեռացումը ռազմաճակատից, նկատի ունենալով, որ այդ զորքերի հրամանատարությունը չէր ենթարկվում Սովետական կառավարության կարգադրություններին:

Ահարոնյանը «մոռացել» է, որ դաշնակցականներից, մուսավաթականներից ու մենշևիկներից կազմված Անդրկովկասյան սեյմի կառավարությունն իրեն Ռուսաստանից անկախ էր հայտարարել ու դարձել էր դաշնակիցների հլու կամակատարը և նրանց հանձնարարությամբ նպաստում էին ռազմաճակատից ռուսական զորքերի հեռացմանը:

Իսկ դրանում դաշնակիցները շահագրգռված էին, քանի որ Կովկասյան ռազմաճակատից հեռացող զորքերի

հաշվին համալրելու էին Սովետական Ռուսաստանի դեմ կռվող գեներալ Դենիկինի «Կամավորական բանակը»:

Ահարոնյանը «մոռացել» է, որ իր համաձայնություններ անգլիական հրամանատարությունը Կարսի ամրոցի թնդանոթները հանել և ուղարկել էր գեներալ Դենիկինին՝ Կարսը զրկելով պաշտպանվելու միջոցից:

Նորօրյա դաշնակցական գաղափարախոսներին հարկ եմ համարում հիշեցնել, որ հակառակ Ահարոնյանի ու դաշնակցության մյուս ղեկավարներ դիրքորոշման, Ռոստոմ Զորյանը, որը մասնակցել էր «Թուրքահայաստանի մասին» Սովետական Ռուսաստանի ժողկոմխորհրդի գեկրետի մշակմանն ու ընդունմանը, Պետրոգրադից Թիֆլիսի Փոխարեն, մեկնել էր Բաքու՝ Ստ. Շահումյանի հետ միասին գեկրետն իրագործելու նպատակով:

ԵՐԿՐՈՐԳ «ԴԱՎՋ»

Հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի գործած երկրորդ «դավը» Ահարոնյանը համարել է է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

«Կարելի էր սպասել,-գրել է Ահարոնյանը,-որ Ռուսիան, թէկուզ բոլշևեիկ դարձած, գէթ դիւանագիտորէն կաշակցի Հայաստանին, որին լքել էր զինուորապէս: Բայց այս դէպքում դուք եւ ձեր կառավարութիւնը տմարդօրէն դաւեցիք մեզ: Այդ իսկ պահուն դուք Բրեստ-Լիտովսկի դաշինքը կռեցիք, որով Թիւրքիային էիք թողնում ոչ միայն Թիւրքաց Հայաստանը, այլեւ Կովկասեան Հայաստանի մի խոշոր բաժինը՝ Կարսի, Արդահանի եւ Սուրմալուի շրջանները:

Ահա ձեր երկրորդ դավը... Եւ այս դաշինքի անունով էր, որ թիւրք հրամանատար Վեհիբ փաշան այնուհետեւ շարժեց դէպի Հայաստան՝ պահանջելով Կարս, Արդահան եւ Սուրմալու»:

«Ալեքսանդրապոլի դաշինքը,-շարունակել է Ահարոնյանը,-որ ձեր մեղադրանքի գլխավոր հիմքն է, կնքուած է 1920-ին, մինչդեռ Բրեստ-Լիտովսկի դաշնագրութիւնը երկու տարի առաջ, 1918-ին:

Սասցէք այժմ, մե՞նք ենք, որ հայկական հողերը յանձնեցինք թիւրքերին, թէ դուք, Սովետական Ռուսիոյ վարիչներդ: ...Եւ սակայն, հակառակ ձեր դաւերի հայ ազգը մի մարդու պէս ծառացաւ իր դարաւոր թշնամու՝ թուրքի դէմ եւ

դէն շարտեց Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը եւ իր թոյլ ոյժերով շարունակեց պայքարը»:

1. Ահարոնյանը «մոռացել» է, որ Անդրկովկասյան կառավարութիւնը միակողմանի թուրքերի հետ կնքել էր Երզնկայի զինադադարը:

2. Ահարոնյանը «մոռացել» է, որ եթէ նպաստեին ռուսական զորքերի հեռացումը կասեցնելուն, ապա թուրքերը չէին համարձակվի խախտել Երզնկայի զինադադարը և առաջ չէին շարժվի:

3. Ահարոնյանը «մոռացել» է, որ հաշվի չառան Ստ. Շահումյանի պահանջը Բրեստի հաշտութեան պայմանագրի Կովկասին վերաբերող հոդվածը չկատարելու մասին, որի հնարավորութիւնը կար:

4. Ահարոնյանը «մոռացել» է, որ դեպի Հայաստան շարժվող թուրքական զորքի դեմ միակ կովող ուժը հայկական բանակն էր, որին հանձնել էին հայերի նկատմամբ իր ատելութեամբ աչքի ընկած վրացի գեներալ Օդիշելիձեի ենթակայութեանը:

5. Ահարոնյանը «մոռացել» է, որ դաշնակցութեան լուռ համաձայնութեամբ վրացիները Կարսը և մյուս տարածքները հանձնեցին թուրքերին, դրա փոխարեն իրենց ձեռքում պահելով Բաթումը:

6. Ահարոնյանը «մոռացել» է, որ դաշնակցութեան լիդերները Սարգարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերից հետո ոչնչի հավասարեցրին հայ ժողովրդի տարած հաղթանակը, տրվեցին երիտթուրքերին և նրանց թելադրանքով ստորագրեցին Բաթումի խայտառակ պայմանագիրը, որով թուրքերին զիջեցին ավելի շատ տարածք, քան նախատեսված էր Բրեստի պայմանագրով:

Ահարոնյանը «մոռացել» է, որ Բաթումի բանակցութեանների ժամանակ, դաշնակցական գործիչներից կազմված հայոց պատվիրակութիւնը միացել է թուրքական պատվիրակութեանը և մերժել են բանակցութեաններին Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցութիւնը, որն այդ դեպքում լինելու էր Ստ. Շահումյանը:

Ահարոնյանը «մոռացել» է, որ 1918թ. ամռանը, Ա. Խատիսյանի հետ միասին գտնվելով Կ. Պոլսում, ընդունել են հայ ժողովրդի դահիճներ Թալեաթի ու էնվերի

առաջարկությունը Հայաստանը Թուրքիայի ու Ադրբեջանի հետ կոնֆեդերացիայի մեջ մտնելու պահանջը:

Քարեբախտաբար, այդ պահանջը չի իրականացվել, քանի որ Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիան պարտվել է և 1918թ. հոկտեմբերին Մուզրոսի դաշնագրով նրա գործերը հեռացել են Հայաստանից:

ԵՐՐՈՐԳ «ԴԱՎԸ»

Հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի գործած երրորդ «դավը» Ահարոնյանը համարել է այն, որ նա չի ընդունել Սևրի դաշնագիրը:

Ահարոնյանը նշում էր, որ երբ հայ ժողովուրդը թուրք զավթիչների դեմ կռվում էր էրզրումի, Կարսի պատերի տակ, Երևանի տակ և Ղարաքիլիսայի դաշտերում, Ռուսաստանը ոչ միայն չթել էր Հայաստանը, այլև Մոսկվայում սկսել էին բարեկամական գրուպներ թուրքերի հետ:

Ահարոնյանը գրում էր. «Բոլոր այս գերագույն պայքարին դուք բացակայ եղաք մինչև 1920 թվի օգոստոս 10-ի ճակատագրական թևակներ, երբ շնորհիւ հայ ժողովրդի կորովին եւ իր արիության, շնորհիւ դաշնակիցների յաղթության, մարտիրոս ազգը ձեռք բերեց վերջապէս ազգային ազատութեան քարտը, Սևրի դաշնագիրը, որ ճանաչում էր միացեալ եւ անկախ Հայաստանը»:

«Ահա,-շարունակում էր Ահարոնյանը,-այդ ժամանակ դուք վերստին յայտնուեցիք Կովկասում, բայց այս անգամ ձեր դաշնակից թիրաքների հետ ձեռք ձեռքի տուած: Եւ դուք յայտնուեցիք որպէս Սևրի դաշնագրի, այսինքն հայ ժողովրդի ազատագրութեան թշնամի:

Ահա ձեր երրորդ դավը Հայաստանի դէմ»:

1. Ահարոնյանը «մոռացել» է, որ իր կուսակցությունը միացած ադրբեջանցի մուսավաթականների և վրացի մենշևիկների հետ Անդրկովկասն անջատել էին Ռուսաստանից և նրան հայտարարել իրենց անկախության թշնամի:

2. Ահարոնյանը «մոռացել» է, որ 1918 թ. գարնանը ոչ թե Ռուսաստանն էր լքել Հայաստանը և նրան մենակ թողել արշավող թուրքերի դեմ, այլև իր կուսակցությունն էր հեռացել Ռուսաստանից և ապավինել Անտանտի տերութուններին, որոնք կռվում էին Սովետական Ռուսաստանի դեմ:

3. Ահարոնյանը «մոռացել» է, որ չնայած Ռուսաստանի նկատմամբ բռնած թշնամական դիրքին, Սովետական Ռուսաստանի կառավարությունը միջոցներ է ձեռնարկել և Արևմտյան ռազմաճակատում ու այլ վայրերում գտնվող հայ զինվորները կազմել է կամավորական գնդեր և ուղարկել Հայաստան, իրենց հայրենիքը թուրք զավթիչներից պաշտպանելու համար:

4. Ահարոնյանը «մոռացել» է, որ Սևրի դաշնագրի կնքմանը Սովետական Ռուսաստանը չէր մասնակցել, և քանի որ դա շոշափում էր նրա կենսական շահերը, որի համար էլ դեմ էր դրան:

Բայց Ռուսաստանի դեմ լինելը ոչնչով չէր խանգարում Սևրի պայմանագրի իրականացմանը:

5. Ահարոնյանը «մոռացել» է, որ Սևրի դաշնագիրը ոչ թե «ճանաչում էր միացեալ եւ անկախ Հայաստանը», այլ «Հայաստան» անվան տակ հասկանում էր միայն Արևելյան Հայաստանը:

6. Ահարոնյանը «մոռացել» է, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Խատիսյանի ձեռքով կնքված Ալեքսանդրապոլի պայմանագրով Սևրի դաշնագրից առաջինը հրաժարվել է Հայաստանի դաշնակցական կառավարությունը, որի անունից այդ դաշնագիրը ստորագրել էր ինքը՝ Ահարոնյանը:

6. Ահարոնյանը «մոռացել» է, որ Սևրի պայմանագրից հրաժարվել է Ֆրանսիան՝ քեմալական Թուրքիայի հետ 1921 թ. կնքելով պայմանագիր:

7. Ահարոնյանը «մոռացել» է, որ ստորագրած դաշնակից տերություններից ոչ մեկը Սևրի պայմանագիրը չի վավերացրել:

8. Ահարոնյանը «մոռացել» է, որ Սևրի պայմանագիրը վերանայվել է Լոզանի կոնֆերանսում Թուրքիայի հետ կնքված նոր պայմանագրով, որին դարձյալ Սովետական Ռուսաստանին մասնակից չեն դարձրել:

ՉՈՐՐՈՐԴ «ԴԱՎԸ»

Հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի գործած չորրորդ «դավը» Ահարոնյանը համարել է հետևյալը. «Բագուի արեւելեան ժողովուրդների համբաւաւոր կոնգրէսից յետոյ, որին նախագահում էր Զինովիեւ, Քեազիմ Կարաբեքիր փաշան ձեր ներշնչումով հեռագիր էր ստանում Բագուից Հայաստանի դէմ շարժուելու համար:

Եւ թիւրքական արշաւանքը յաջողեցնելու համար դուք միաժամանակ ձեր պրոպագանդով բարոյալքեցիք հայ բանակը, թիւրքերին մատակարարեցիք զինւորական մասնագէտներ, ռազմամթերք ու պարէն:

Ձեր զինւորական գործակալները հզօրապէս աշակցեցին Կարսի անկմանը: Եւ մեր շարունակող դիմադրութիւնը փշրելուն համար ձեր կարմիր բանակը կոխեց մեր երկիրը հիւսիսից այն ժամանակ, երբ թիւրք բանակը արշաւում էր հարավից:

Ահա այս կրկնակ յարձակողականով, որ դուք սարքել էիք թիւրքերի հետ, դուք հոշոտեցիք մեր հայրենիքը, պատճառ դառնալով Կարսի նահանգի հարիւր հազարավոր հայութեան կոտորածին ու փշացումին եւ յաջողեցրիք Հայաստանի կործանումը յօգուտ թիւրքերի:

Ահա ձեր շորրորդ դավը Հայաստանի դէմ»:

1. Ահարոնյանը «մոռացել» է, որ դաշնակցական կառավարութեան վարած ներքին քաղաքականութիւնը, մաուզերիստների ու խմբապետների հաստատած տեռորը լիակատար կերպով հյուժել էր ժողովրդին, որի վառ ապացույցն է Ս. Վրացյանի կառավարութեան դեկլարացիան:

2. Ահարոնյանը «մոռացել» է, որ հայկական բանակի բարոյալքման գլխավոր մեղավորն իր կուսակցութեան ավանտյուրիստական քաղաքականութիւնն էր, որ 1920 թ. մայիսին գորքն ուղղել էր սեփական ժողովրդի դեմ:

3. Ահարոնյանը «մոռացել» է, որ Կարսը հանձնվել է թուրքերին, որովհետեւ իր համաձայնութեամբ Կարսի ամրոցից հանվել էին թնդանոթները:

4. Ահարոնյանը «մոռացել» է, որ Շանթի պատվիրակութիւնը Մոսկվա ուղարկելուց սկսած դաշնակցական կառավարութիւնը մերժում էր Սովետական Ռուսաստանի առաջարկած դաշինքն ու միջնորդութիւնը և ապավինվել էր Անտանտի տերութիւններին, որոնք էլ, ի վերջո, խորհուրդ տվեցին՝ «ավելի լավ է հանձնվել թուրքերին, քան միանալ Ռուսաստանին»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ «ԴԱՎԸ»

Հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի գործած հինգերորդ «դավը» Ահարոնյանը համարում է հետևյալը. «Դուք

փորձեցիք խաբել հայ ժողովրդին «Հայաստանի սովետական հանրապետութիւն» կարիկատուրայով:

Եւ ինչպէս մի ժամանակ ցարական կառավարութիւնը Պետրոգրադից էր ուղարկում Հայաստան իր ոստիկաններին ու այլ պաշտոնէութիւնը, նույնպէս եւ դուք Ռուսիոյ խորքերից մեր երկիրը թափեցիք ձեր գործակալներին, նոյնքան օտար հայ ժողովրդին, որքան եւ շարակամ: Դուք բանդերը լցրիք մեր մտաւորականներով ու մեր մարտական երիտասարդներով, որոնց եւ կացնահար խողողել տուիք»:

«Հայաստանում,-գրում էր Ահարոնյանը,-ձեր հաստատած ռեժիմը այն աստիճան դժնդակ էր, որ հայ ժողովուրդը, նոյնիսկ կիսաքաղց եւ արիւնաքամ, անկարող եղաւ հանդուրժել եւ 1921 թւին փետրուար 18-ին ոտքի ելաւ ձեր դէմ, եւ դուրս քշեց երկրից ձեր գործակալներին եւ ձեր բանակը»:

«Ինչ փայլուն ապացոյց,-շարունակում էր Ահարոնյանը,-որ մենք չենք կարող տանել ոչ ձեր ռեժիմը, ոչ ձեր դոկտրինը եւ ոչ ձեր բռնութիւնը:

Բայց ձեր քաղաքականութիւնը շէր կարող հանդուրժել, որ փոքրիկ հերոսական հայ ազգը, որին դուք շարտել էիք թիրքերին ճարակ, կարողանայ վերջապէս ապրել անկախ իր հայրենիքի մի փոքրիկ մասում: Ծնշելու համար հայ ժողովրդի ապստամբութիւնը, դուք վերստին մեր արիւնով հեղեղեցիք մեր աշխարհը:

Սա ձեր հինգերորդ դաւը, պ. ժողովրդական կոմիսար»:

1. Ահարոնյանը «մոռացել» է, որ Իջևանի կողմից Հայաստան մտած 11-րդ Կարմիր բանակին ոչ միայն ժողովուրդը, այլև դաշնակցական կառավարութեան գորքը դիմավորեցին ուրախութեամբ և նույնիսկ նրա դեմ ոչ մի կրակոց չարձակվեց:

2. Ահարոնյանը «մոռացել» է, որ եթե Կարմիր բանակը մեկ օր էլ ուշանար, ապա թուրքական զորքերը կմտնեին Երևան ու դրանով կավարտվեր ամեն ինչ:

3. Ահարոնյանը «մոռացել» է, որ Հայաստանում սովետական իշխանութիւնը հաստատվել էր խաղաղութեամբ:

4. Ահարոնյանը «մոռացել» է, որ սովետական իշխանութիւնը հենց առաջին օրից ձեռնամուխ է եղել վերացնել դաշնակցական կառավարութեան գործունեութեան տխուր հետևանքները՝ գաղթականների կարիքները հոգալուց

մինչև Ալեքսանդրապոլի պայմանագրի հետևանքների վերացնելը:

5. Ահարոնյանը «մոռացել» է, որ 1921 թ. փետրվարի 18-ին կազմակերպված խռովությունը, որի հետևանքով ժամանակավորապես տապալվեց սովետական իշխանությունը, թելադրված էր քեմալական Թուրքիայի կամքով, նրա և մենշևիկյան Վրաստանի ու Անտանտի տերությունների աջակցությամբ:

6. Ահարոնյանը «մոռացել» է, որ փետրվարյան խռովությամբ Հայաստանում սկսվել է եղբայրասպան քաղաքացիական պատերազմ, որը նոր դժբախտություններ է պատճառել հայ ժողովրդին:

7. Ահարոնյանը «մոռացել» է, որ սովետական իշխանությունը հատուկ դեկրետով ներում է շնորհել բոլոր նրանց, ովքեր հանդես էին եկել սովետական իշխանության դեմ:

8. Ահարոնյանը «մոռացել» է, որ Ա. Մյանսիկյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Լուկաշինը, Ա. Մոսավյանը և Սովետական Հայաստանի մյուս գործիչները ոչ թե ռուսացած հայեր էին, այլև իրենց երկրի իսկական հայրենասերներ, որոնք ոչ մի ջանք չխնայեցին դաշնակցական կառավարությունից ժառանգած քայքայված Հայաստանը վերաշինելու համար:

ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՉԻՉԵՐԻՆԻ ՀԵՏ

Այնուհետև Ահարոնյանն իր նամակում գրել է, որ վերոհիշյալի մասին Չիչերինին ասել է ճենովալում 1922 թվականին և ավելացրել, թե «լաւ է, արդար է, որ նոյնը յիշեցնեմ հայ ժողովրդին եւ կրկնեմ հրապարակով...»:

Ինչպես վկայում է Ահարոնյանը Մ. Վարանդյանի և Ա. Գյուլխանդանյանի հետ միասին 1922 թ. մայիսի 15-ին հանդիպել են Չիչերինին:

Այդ հանդիպման ժամանակ Ահարոնյանը, ինչպես ինքն է գրում, նկարագրել է «1918 թվին թյուրքերի առաջխաղացման և ռուս բանակի հեռանալու օրերին Թուրքիո հայ ժողովրդի համակրանքը դեպի ռուսները և թե ես անձամբ ինչ եմ արել այդ օրերին»:

Ընդամիջեմ Ահարոնյանին և ասեմ, նա «մոռացել» է, որ 1918 թ. գտնվում էր այն գործիչների առաջին շարքում, որոնք ամեն ինչ արեցին Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և

Անտանտի թեկադրանքով ռազմաճակատից ռուսական զորքերը հեռացնելու համար:

Ահարոնյանը «մոռացել» է, որ ռուսական զորքերի հեռացումը կասեցնելու մասին Հայոց ազգային խորհրդին ուղարկած Ա. Մյասնիկյանի հեռագրի վրա, նա, որպես այդ խորհրդի նախագահ, մակագրել էր, թե դա իրենց չի վերաբերում:

Մի բանում ճիշտ է Ահարոնյանը: Այո, հայ ժողովրդի համակրանքը ռուսների կողմն էր, բայց իրենք՝ դաշնակցականների ղեկավարները, ինչո՞ւ հաշվի չէին առնում ժողովրդի կամքը և գործում էին ադրբեջանցի մուսավաթականների և վրաց մենշևիկների հետ միասին, որոնք ռուսների նկատմամբ ունեին ընդգծված թշնամական վերաբերմունք:

«Ավելացրի,-շարունակել է Ահարոնյանը,-որ միայն ռուսներին հովանավորության պահասն եղավ պատճառ, որ մենք ստիպված եղանք մանդատներ փնտրել»:

Իրվանագիտական «մեծ փորձ» ունեցող Ահարոնյանն այս խոսքերն ասում էր Չիչերինին, որը, ինչպես Բաթումի պայմանագրի ստորագրման ժամանակ, այնպես էլ հետո, քաջատեղյակ էր իրադարձությունների զարգացմանը, երբ դաշնակցական կառավարությունն իր ստեղծման առաջին օրերից մերժելով Ռուսաստանի միջնորդության մասին առաջարկությունը, իր հույսերը սկզբում կապել էր Թուրքիայի, հետո նաև Անտանտի երկրների հետ:

Ահարոնյանը Չիչերինին ասել է նաև, թե թուրքերի հետ միասին ռուսների վերադարձը Կովկաս «հայ ժողովրդին անասելի ցավ դարձավ և ծանր աղետների աղբյուր եղավ մինչև այժմ»:

Մեզմ ասած, այստեղ էլ է Ահարոնյանը մեղանշում ճշմարտության դեմ:

Որովհետև, եթե Ռուսաստանը Կովկաս չվերադառնար, ապա հայտնի չէ թե ինչ ճակատագրի կարժանանար Արևելյան Հայաստանի բնակչությունը:

Ռուսաստանի վերադարձը հայությանը փրկել է նոր աղետներից և ոչ թե «ծանր աղետների աղբյուր եղավ»:

Ահարոնյանը Չիչերինին ներկայացրել է իր վերաբերմունքը ռուս-թուրքական հարաբերությունների նկատմամբ և նշել, թե «ռուսը իր արևելյան նոր

քաղաքականություն հենարան է համարում Թուրքիան, և մենք ստիպված ենք հաշվի առնել այդ փաստը»:

Իրանից ելնելով նա այն կարծիքն է հայտնել, որ «անհնարին չէ հաշտեցնել հայկական շահերը ռուս-թյուրք համաձայնության տրամադրությունների հետ: Մենք կարծում ենք, որ Հայկական արևելյան նահանգները, կամ նրանց մի մասը հայերին հատկացնելը ավելի ևս կամրապնդեր ռուս-թյուրք համաձայնությունը և թյուրքերի գործը կհեշտացներ աշխարհում, վերցնելով մեջտեղից մի դժնդակ պրոբլեմ, որի համար ամբողջ քաղաքակիրթ աշխարհը դեմ է թյուրքերին»:

Այնուհետև, Ահարոնյանը հետևյալ կարծիքն է հայտնել. «Մոսկվայի Սովետը, մնալով հանդերձ թյուրքին բարեկամ և նույնիսկ այդ բարեկամության վրա հենած, պիտի կարողանար մեզ մեծապես օգնել մեր պրոբլեմը լուծելու՝ ճնշում գործելու թյուրքերի վրա: Եվ այս տեսակետը համայն հայությունն է»:

Ի պատասխան Ահարոնյանի կարծիքի, Չիչերինը հայտնել է, որ նա հանդիպել Նորատունկյանին և նրան խոստացել է «անել հնարավորը թյուրքահայերի համար»:

Այնուհետև, անդրադառնալով Կովկասյան Հայաստանին, Չիչերինն ասել է հետևյալը. «Մենք զիջեցինք Կարսի շրջանը թյուրքերին ստիպված, որովհետև ձեր կառավարությունն այդ արդեն զիջել էր»:

Մեղքը մերը չէ, ձերն է: Այս պահուն այդ հողերը (Կարսի) թյուրքական է: Եթե դուք կարողանաք թյուրքերից այն վերցնել ձեր օջախի համար, մենք ուրախ կլինենք: Տարբեր ձևով, մենք թյուրքերին բռնադատել չենք կարող: Մենք նրանց դաշնակիցն ենք, և եթե խոսք բանանք Թյուրքաց Հայաստանի կամ Կարսի մասին, թյուրքերը պիտի մեզ մեղադրեն իմպերիալիզմի մեջ»:

«Մենք,-շարունակել է Չիչերինը,- չենք կարող մեր արևելյան քաղաքականությունը, որը հենված է թյուրք բարեկամության վրա, փորձություն ենթարկել: Ուրախ կլինեմ, եթե դուք հաջողեցնեք: Եվ նույնիսկ Մոսկվա վերադարձիս կաշխատեմ բարոյապես ազդել թյուրք ներկայացուցիչների վրա հօգուտ ձեզ»:

«Ցավում եմ,-ասել է Չիչերինը,-սակայն, որ դուք՝ և ձեր պատվիրակությունը, և ձեր կուսակցությունը գործում եք ռուս Սովետի դեմ»:

Ձեր հակառակությունն այնքան մեծ է մեր դեմ, որ այն ժամին, երբ ձեր ներկայացուցիչները Ալեքսանդրապոլ էին կարսի անկումից հետո, երբ Հայաստանում Սովետ էր հայտարարված, ձեր ընկերները Ալեքսանդրապոլում ստորագրեցին մի դաշնագիր, որի որոշ մի հոդվածը ուղղված է Ռուսաստանի դեմ»:

Այնուհետև, Չիչերինը, ըստ Ահարոնյանի, «շարունակեց իր անհիմն մեղադրանքները դաշնակցության դեմ, Թավրիզի մեր փախստականների դեմ, վերջում նորից խոստացավ «Յյուրքերի մոտ բարեխոսել» հօգուտ Թյուրքաց հայության և հայ ազգային օջախի»:

Վերջում Ահարոնյանը գրել է, որ Չիչերինի մոտց հետացել են «խիստ հիասթափված»(Ա. Ահարոնյան, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Երևան, 2001 թ., էջ 222-224):

Բայց վերադառնամ Ահարոնյանի նամակին, որը վերջացնում է հետևյալ եզրակացությամբ: «Թիւրքերի բարբարոսութիւնը վերջացաւ իրենց պետութեան կործանումով եւ Հայաստանը արիւնի եւ կրակի միջով ձեռք բերեց Սեւրի դաշնագիրը, որպէս գերագոյն հատուցումն իր մարտիրոսութեան ու իր ազատական պայքարի»:

Միայն ձեր դաւերը հարկադրեցին հայ ազգին Ալեքսանդրապոլ գնալ: Աշխարհը չի մոռանայ երբէք, որ թիրքերից յետոյ միմիայն դուք եք անմիջական պատասխանատու հայ ժողովրդի կործանումին:

Դուք եք, որ իդերեւ հանեցիք հերոսական եւ արինոտ ճիգերը հայ ժողովրդի: Պատմութեան դատաստանի առաջ դուք միշտ կը մնաք դաշնակից էնվերների, Թալեաթիների, Քեմալների, որոնց հետ միաբան դուք կատարեցիք այս անորակելի գործը՝ սպանութիւնը հայ ժողովրդի»:

«Իզուր կը փորձէք,-շարունակել է Ահարոնյանը,- այսուհետեւ ճառերով և դիմումներով մոլորեցնել աշխարհի հասարակական կարծիքը եւ հայ ժողովրդի առողջ բնազդը: Իզուր կը փորձէք այսուհետեւ հայութեան վստահութիւնը շահել: Նա, ով պատռել է Սեւրի դաշնագիրը, հայ ժողովրդի ազատութեան քարտը, յաւիտենապէս թշնամի է հայ ազգին...» (ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 207, թ. 1-5): ()

1. Ահարոնյանը «մոռացել» է, որ էնվերի, Թալեաթի և երիտուրքական մյուս հանցագործ պարագլուխների հետ

սերտորեն համագործակցում էր դաշնակցություն կուսակցությունը, համագործակցություն, որի բերած աղետի հետևանքներից մինչև օրս հայ ժողովուրդը չի ձերբազատվել:

2. Ահարոնյանը «մոռացել» է, որ 1918 թ. ամռանն Հայաստանի հանրապետության պատվիրակությունն իր ղեկավարությամբ մեկնել էր Կ. Պոլիս, և շնորհակալություն հայտնել դահիճներ էնվերին ու Թալեաթին՝ Հայաստանի հանրապետությունը ստեղծելու համար:

3. Ահարոնյանը «մոռացել» է, որ Կ. Պոլսում նա ծնկի էր եկել թուրքական սուլթանի առջև, համբուրել նրա աջը և ասել, թե՛ եթե չլինեք սուլթանը, չէր լինի նաև Հայաստանի հանրապետությունը:

4. Ահարոնյանը «մոռացել» է, որ իր կուսակցության ղեկավարած կառավարությունն էր Մուստաֆա Քեմալի հետ կնքել Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը, որով հրաժարվել էր նաև Սևրի պայմանագրից:

5. Ահարոնյանը «մոռացել» է, որ իր կուսակցությունը Ս. Վրացյանի գլխավորությամբ 1921 թ. փետրվարին խոռովություն էր բարձրացրել հենց Քեմալի թելադրանքով:

6. Ահարոնյանը «մոռացել» է, որ Հայաստանը ղեկավարող իր կուսակցությունը, ինչպես 1920 թ. նոյեմբերին, այնպես էլ 1921 թ. փետրվարին, կոչ էր անում բարեկամանալ Թուրքիայի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի:

7. Ահարոնյանը «մոռացել» է, որ Ֆրանսիայի կառավարության թելադրանքով նա և իր կուսակիցները միավորվել էին Ադրբեջանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի վտարանդի կառավարությունների ներկայացուցիչներին հետ և եռանդուն գործում էին Անդրկովկասում ու Հայաստանում սովետական իշխանությունը տապալելու համար:

8. Ահարոնյանը «մոռացել» է, որ Սևրի դաշնագիրն առաջինը պատռել էր Հայաստանի դաշնակցական կառավարությունը, հետո էլ Ֆրանսիան, որի շահերին նա հաճույքով ծառայում էր և ոչ թե Ռուսաստանը:

9. Ահարոնյանը «մոռացել» է, որ Լոզանի կոնֆերանսում ոչ թե Ռուսաստանը, այլ Անտանտի տերությունները Սևրի պայմանագիրը չեղյալ համարեցին և թաղեցին հայկական հարցը:

Համոզված եմ, որ ընթերցողն անպայման նկատեց, որ Ջիշերինին ուղղված բաց նամակով Սովետական Ռուսաստանին այդպիսի մեղադրանքներ ներկայացնելով Ա. Ահարոնյանը հետապնդել է միայն մի նպատակ՝ հայ ժողովրդին պառճառած շարիքների համար իր կուսակցությանը փրկել պատասխանատվությունից:

Այդ նպատակն ունեն նաև դաշնակցության նորոգյա գաղափարախոսները, որոնք ժամանակ առ ժամանակ Հայաստանի մամուլում հրապարակում են Ահարոնյանի բաց նամակը:

Նրանք օգտվում են այն հանգամանքից, որ այսօրվա ընթերցողներից շատ-շատերը գաղափար չունեն իրական փաստերից և միամտորեն հավատում են այն ամենին, ինչ գրել է Ահարոնյանը:

Ասվածի կապակցությամբ ընթերցողի ուշադրությանն են ներկայացնում հետևյալը:

Խոսքս իր ստեղծման օրից սկսած, տասնամյակներ շարունակ հայ ժողովրդի բախտը «տնօրինող» քաղաքական կուսակցության՝ դաշնակցության գործելակերպի, նրա սին հույսերի և ակնկալությունների ու դրանց արդյունքով գործած սխալների մասին է, որոնց պատճառով ու հետևանքով հայ ժողովուրդը կրել է ամենածանր ողբերգությունը՝ դառն հիասթափության ուղեկցությամբ:

Այդ կուսակցությունն իր գոյության առաջին օրից չհասկացավ, որ քաղաքականության մեջ սիրտ չկա և մեր ազգային գոյությունն ու ապագան կապեց ուրիշների գուժի հետ:

Նույնիսկ հեղափոխական շարժումների և գործողությունների մեջ դաշնակցությունը բոլոր հույսերը դրել էր ուրիշների զգացմունքների, Եվրոպայի համակրանքը շահելու վրա:

Այսօր էլ պարզ չէ, թե հեղափոխական ասելով դաշնակցությունն ինչ էր հասկանում, եթե ոչ ջարդվելով Եվրոպայի գուժը շարժել:

Մեր պատմության մեջ, իմ կարծիքով, հեղափոխություն բառը պարզապես նշանակել է մեռնել, ջարդվել:

Դաշնակցությունն այդ հեղափոխական բառն օգտագործելու հետ միասին չհասկացավ, որ ջարդվելով ու կոտորվելով ոչինչ չէր ստացվի:

Ի՞նչն էր մեր զենքը, մեր ուժը, վերջապես մեր հույսը: Դա՝ շատ ջարդվելն էր և դրանից հետո բարձրաձայն աղաղակել, որպեսզի Եվրոպան ուշադրություն դարձներ: Մինչդեռ հարկավոր էր արևմտահայության ուժերը համախմբել...

Այդպես շարունակվեց տասնամյակներ, բայց դաշնակցությունը չհասկացավ այդ մեթոդի ամբողջ սնանկությունը:

Սակայն, ամբողջ ցավն էլ նրանումն է, որ դաշնակցության լիդերներն ու դաշնակցականորեն մտածողները չհասկացան այդ մեթոդի սնանկությունը, ավելի ուժգին փարվեցին այդ մեթոդին, իրենց հույսը դնելով խիղճ ու ամոթ կորցրած իմպերիալիստական տերությունների խարդախ ու նենգ դիվանագիտության վրա:

Իմ համոզմամբ Ահարոնյանի վերոհիշյալ նամակն էլ տառապում է այդ սին մեթոդով, երբ հայոց դժբախտությունների համար մեղքի բաժին ունեցող արևմտյան տերություններին թողած, մեղադրանքներ է ներկայացնում Ռուսաստանին:

Այն Ռուսաստանին, որի շնորհիվ պահպանվեց Արևելյան Հայաստանը և աննախադեպ զարգացում ապրեց Սովետական Հայաստանի 70 տարիներին, գտնվելով Սովետական Միության կազմում:

Անհրաժեշտ եմ համարում այս հանգամանքը հատկապես ընդգծել, քանի որ դաշնակցության նորօրյա գաղափարախոսները շարունակում են անխնա պատժիչ «էքսպլեդիցիաներ» կազմակերպել Սովետական Հայաստանի 70-ամյա պատմության դեմ:

Այստեղ հարկ չկա այդ պրոբլեմին հանգամանորեն անդրադառնալ: Բայց և ուզում եմ դաշնակցության գաղափարախոսներին հրապարակավ հարցնել. եթե Արևելյան Հայաստանը չգտնվեր Ռուսաստանի կազմում, եթե Սովետական Հայաստանը չլիներ ՍՍՀՄ-ի կազմում և դրա շնորհիվ չպահպանվեին Հայաստանն ու հայ ժողովուրդը, ապա դաշնակցությունն ո՞ւր էր վերագառնալու և այնպես

անողորմության մասնակցելու իշխանության հասնելու պայքարին:

2018թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում հաղթանակել է խաղաղ հեղափոխությունը:

Որոշակի ժամանակ է պահանջվում ամբողջությամբ այդ հեղափոխության նշանակությունը վերլուծելու և իմաստավորելու համար:

Առայժմ, կամենում եմ նշել, որ 1990-ական թվականներից մինչև 2018 թվականը Հայաստանում ոչ միայն տիրապետող է եղել դաշնակցության գաղափարախոսությունը, այլև այդ կուսակցությունը տեղական ժամանակ եղել է կառավարության մեջ և ամբողջությամբ պատասխանատու է այն ամենի համար, ինչի վերացման նպատակով անհրաժեշտ եղավ Ապրիլ-մայիսյան հեղափոխությունը:

2018թ. ապրիլ-մայիսյան հեղափոխության հաղթանակը վկայում է, որ Հայաստանում գործող քաղաքական կուսակցությունների գոյությունը, մեղմ ասած, այլևս հասկանալի չէ:

Այդ իրողությունը հատկապես վերաբերում է դաշնակցությանը, որի գաղափարախոսության կրախի ուղղակի վկայությունն է կատարված համաժողովրդական հեղափոխությունը:

Ասվածի կապակցությամբ հարկ եմ համարում հիշեցնել նշանավոր պատմաբան-ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի հետևյալ բնութագրումը. «Դաշնակցության գաղափարախոսության էությունն է՝ կանգնել դաշնակցության տեսակետի վրա, նշանակում է ժխտել սովետական իշխանությունը (նաև՝ Ռուսաստանը): Ընդունել սովետական իշխանությունը (նաև՝ Ռուսաստանը), նշանակում է ժխտել դաշնակցության գոյության իրավունքը»

ՎԵՐՋ

An Overview of the Geography of Armenia

*Edic Baghdaasian
Editor Apaga, Louys
Director ARC*

Armenian Highland

Nowadays the first well-known historical information about the Armenian Highland is preserved in Sumerian cuneiform inscriptions and dates back to 28-27 centuries BC. The early state formation Aratta is mentioned in those inscriptions. The name is compared with the toponym Ararat, which becomes more obvious while comparing Sumerian and biblical stories about the great flood. In these stories Aratta and Ararat are supposed to be place of rescue. In ancient Mesopotamian cuneiform writings proper names were written in two ways: phonetically (in syllables) and ideographically. In the first case Aratta was written in three syllables (A-rat-ta), in the second case it was written as Subur (Subari, Subartu). This means that these two names referred to one state. The analyze of mentionings of Subur-Subari-Subatru (the ancient ones were found in manuscripts dating back to the 26th century BC) shows that it was found in the Armenian Highland (in the basin of lake Van and in its south-western parts). From the 26th century BC Mesopotamian manuscripts mentioned god Hay(a), his eponymous land and nation. It is significant that in Sumerian-Akkadian bilingual inscriptions Suburi of Sumerian part in

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՆՆԱԾԱՐԴ
(Յրգիկական բարձրագ)



Akkadian part coincided with Hay(a), which shows that these two toponyms referred to the same land. As a matter of fact, from one hand we have Aratta-Subur, from the other hand Subur-Hay(a), which means that in the first half of the 3rd century BC Armenia was famous with three equivalent names (Aratta-Hay(a)-Subur). From 24-23 centuries BC in the Armenian Highland “Arman(i)”, “Armi”, “Aram” and other toponyms were mentioned, which were proto-forms of “Armenia”. In inscriptions (24-23 centuries BC) of Ebla (northern part of ancient Syria) “Sons of Haya” (“hayordiner”) were mentioned, who lived in the land of Armi and who established relationship with other countries. “Sons of Haya” (hayordiner) in manuscripts of Ebla, god Haya and the land of Sumerian sources genealogically were connected with the Armenian nature. So still from 24-23 centuries BC connected with the Armenian Highland the main names of Armenia and the Armenians were mentioned: Aratta, Haya, Subur and Arman(i). Subur was no longer in use in the first half of 1st millennium BC, and the others are still in use as Ararat, Hayk-Hayastan and Armenia.

Armenian Highland is situated in the northern borderline of Western Asia between Asia Minor and Iranian plateaus, Black Sea and Mesopotamian plains. The Armenian people originated and created their state in the Armenian Highland; they created their own culture here. The Armenian Highland almost completely coincides with the historical Armenian homeland. From ancient times it has been extended from the rivers Kur and Yeraskh (Araks) up to Gamirk (Cappadocia), from Pontus and Trialet mountains to the southern parts of the Armenian Taurus.

The Armenian Highland (about 300,000 Km²) is surrounded by high mountain ranges: in ancient times the highland between them was called Mijdashkharh Hayots (Midland of Armenia).

Armenian Highland has boundary with Antitaurus mountains to the west, which divided it from the Anatolian Plateau (Asia Minor), and to the north – with west Pontus mountains. Northern borders of the highland stretches the watershed of Moskakan and Trialet mountains. In the East they are the borders of Artsakh and Kur-Araks valleys. The border of the highland reaching Karabakh turns to the west, goes through the mountains in the north of Lake Kaputan (Urmia), then turning to the south it includes the western coastal regions of the lake and reaches Kordvats mountain range, which is the continuation of the Armenian Taurus. Turning again to the west and crossing the river Tigris, it reaches Euphrates, cuts it and goes up to Antitaurus through Malatya mountains. In these borders the region has over 400 sq. km. area. The surface of the Armenian Highland is divided into mountain

ranges with different directions, between which concavities and plateaus extend, which have favorable conditions for agriculture, they are called in the Armenian sources “fields”. The highland has **1500-1800 m.** average height above the sea level, with which it significantly exceeds both the neighboring Iranian and Anatolian plateaus.

In the center of the Armenian highland from east to west **mountain range Haykakan Par** is situated. In the outskirts of the latter rises extinct volcanic Ararat (Masis) with its two peaks, one of which is the highest mountain of the Armenian Highland (5165m.) and it is called in the Armenian sources Azat Masis (free Masis), which joins to Sis or Lesser Ararat mountain peak (3925m.) with “Sardari aghbyur” (Sardar spring). Masis is the holy mountain of Armenians, the symbol of the motherland (the 18th day of the Armenian ancient calendar is dedicated to it). People told many legends about Masis. According to the Bible the Biblical Noah’s ark came to rest on Masis (Ararat). From the eastern edge of Haykakan Par with the southern direction the mountain range of Vaspurakan is expanded, the continuation of which is the mountain range of Zagros. The Armenian plateau has numerous mountain ranges. In the west of the **mountain range of Vaspurakan** the picturesque mountain of Tsaghkants is situated, at the edge of which is situated the only existing volcanic mountain Tondrak (3542 m.). Up to now around him from the crater (600m. deep) still water steams and sulfuric fluids erupt with high temperature. In the southern part of the **mountains Tsaghkants** is situated the extinct volcanic mountain Sipan (4434 m.). It is the second highest peak of the highland. In the south of Sipan avoiding western shores of Lake Van Bznunyats mountains are stretched which are ended with the peak Nemrut. Nemrut is an extinct volcano, although it was active until the first half of XV century (the last eruption took place in 1441). The north - eastern large part of the Armenian highland is called **Lesser Caucasus**. In this part there are several prominent mountain ranges, as Javakheti, Virahayots, Bazumi, Pambak, Geghama, Sevan, Vardenis, Mravi Artsakh mountains. From mountains Vardenis starts and to the south up to Yeraskh (Araks) expands the mountain range of Syunik or Zangezur, in the southern part of which is situated the highest peak of Lesser Caucasus Kaputjugh (3904m.). In the southern borderline of Ararat valley is situated the highest mountain of the territory of Republic of Armenia – Aragats (4090m.). The prairies and feeds spread over his slopes are important livestock areas famous from ancient times. In the east of Aragats mount Ara is situated. In the southern part of the Armenian

highland stretches mountain range of **Armenian Taurus**, in different parts of which various peaks are raised (Marutasar or Maratuk, Tsovasar, Andok, Arnos, Artos, etc.).

The Armenian Highland is famous for its richness of water resources. It is the only Hydraulics of Western Asia and it is not by chance, that it has got the title “The land of rivers” by the Semitic population of Ancient Mesopotamia in II millennium BC. From here Euphrates, Tigris, Yeraskh, Halis, Gaylget, Kur, Chorokh outflow.

The Armenian main river is **Yeraskh** or **Araks**, the basin of which is totally included in the territory of the Armenian Highland. The outflows of Yeraskh are situated in the area of Byuraknyan mountains. In the past Yeraskh separately flowed into Caspian Sea, but over time it changed its watercourse and merged with river Kur. Yeraskh has numerous brooks - Akhuryan, Kasakh, Hrazdan, Arpa, Vorotan, Voghji, Tghmut etc.

From the early times Yeraskh had economic and political huge significance. In the average current of his basin the biggest and most prolific plane – Ararat Valley is expanded, which has been the political center of the Armenian statehood - the Realm of Kings for centuries. In the Armenian Valley ancient cities of the Armenian state were built - Armavir, Yervandashat, Artashat, Vagharshapat, Dvin. The capital of Republic of Armenia Yerevan is also situated here.

Euphrates is the longest river (3065km) of Western Asia, while Tigris is the largest by waterflow (1850km). River Euphrates has two branches – Western Euphrates and Eastern Euphrates. Western Euphrates goes out from Tsaghkavet Mountains in the north of the city Karin (Erzurum). For centuries it has been considered to be the western border of the Kingdom of Armenia. Eastern Euphrates – Aratsani river goes out from Tsaghkants Mountains. Both branches of Euphrates merge near the city Kapan of Sophene and form united Euphrates, which then going beyond the borders of the Armenian Highland flows through Mesopotamia. The Tigris unites with the Euphrates and form Shatt-al-Arab river, which flows into the Persian Gulf.

Tigris also has two branches – Western and Eastern. The outflows of Western Tigris are situated in the area of Sophene, near Lake Sophene. Going out of the borders of the highland Tigris flows through Mesopotamia, joins Euphrates and together with it flows into the Persian Gulf.

River Kur goes out from Kriakunq, which is in the province Kogh of Tao state. With its main part it flows out of the borders of Armenian Highland, but in ancient times it delimited Greater Armenia from Virq

and Albania. In the field of Mughan Yeraskh joins Kur and then they together flow into the Caspian Sea. Halis (Alis), Gayl rivers rise and flow into the Black sea from Upper Armenia. River Chorokh belongs to the basin of Black Sea too, which rises in Chormayr mountains situated in Sper. In the Armenian Highland there are numerous lakes and ponds. The most majors are Kaputan (Urmia), Van and Sevan.



Lake Urmia is situated in the borderline of Iranian plateau. The largest of three lakes with the surface area is Kaputan (over 5900 sq.km.), it is an endorheic lake, water is salty, that is why no fish species is multiplied here. Because of high degree of evaporation the mirror of the lake is continuously reducing. The coastal zone of Kaputan has a thick layer of salt. A number of rivers flow into the

lake, such as Salmast, Urmia, Araskh etc..

Lake Van is also known as Bznunyats, Tospa, Rshtunyats. It is the second largest river in the Armenian Highland (over 3800 sq. km.). It is an endorheic and saline lake. The level of the lake is constantly fluctuating sometimes descending, sometimes increasing. Like this in 1841 as a result of the severe water increase the lake buried ancient city Artchesh. Akhtamar village was also sunk. That is the reason that from seven islands mentioned in “Ashkharhatsuyts” (“Geography”) only Akhtamar, Arter, Ktuts and Lim remained, the most significant of which is Akhtamar with a magnificent monastery SurbKhach



(monastery of the Holy Cross). The only fish in this lake is Pearl Mullet. Lake Van is a close basin involving in itself rivers and streamlets. The basin of lake Van is the ancient cradle of the Armenian state. At the same time it is a region having major economic and cultural importance. Numerous residences are built in the coasts of the lake - Van, Artchesh, Artske, Khat, Datvan, Vostan etc.

Lake Sevan which was called Geghama or Gegharkunyats sea in ancient times is rich in various fish species (Sevan trout, Salmo

ischchan aestivalis, as well as whitefish brought here in last decades).



